# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԶԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ, Վայոց Ձորի մարզ, բն.Զառիթափ, (0282) 91507, zaritapi.gyughapetaran@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 46

### ԶԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020Թ.-Ի ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի ԹԻՎ 7 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջով, ***ավագանին որոշում է՝***

Հաստատել Զառիթափ համայնքի ավագանու 2020թ-ի հոկտեմբերի 12-ի թիվ 7 նիստի օրակարգը հետևյալ հարցերով՝

1. ՀՀ Վայոց ձորի մարզի Զառիթափ համայնքի ավագանու 2020թ. թիվ 7 նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Զառիթափ համայնքի 2020թ. բյուջեի ծրագրային և ծախսերի տնտեսագիտական հոդվածների միջև վերաբաշխում կատարելու մասին:
3. Զառիթափ համայնքի 2020 թ. բյուջեի եկամտային և ծախսային մասերում փոփոխություններ կատարելու մասին:
4. Ռազմական գործողությունների ընթացքում զոհված և վիրավորում ստացած Զառիթափ համայնքի բնակիչների ընտանիքներին միանվագ դրամական աջակցություն տրամադրելու մասին:

Կողմ- 5 դեմ- 0 ձեռնպահ- 0

1. Սասուն Վարդանյան
2. Սմբատ Ասլանյան
3. Արգիշտի Բաբայան
4. Գարիկ Գրիգորյան

5. Գևորգ Գևորգյան
6. Վիրաբ Սաղաթելյան

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՍԻՄՈՆ ԲԱԲԱՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԶԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ, Վայոց Ձորի մարզ, բն.Զառիթափ, (0282) 91507, zaritapi.gyughapetaran@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 47-Ն

## ԶԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 Թ. ԲՅՈՒՋԵԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ելնելով համայնքի կարիքների համար Եվրոխորհրդի դրամշնորհային ծրագրով նախատեսված տրանսպորտային սարքավորման ձեռքբերման նպատակով համաֆինանսավորում կատարելու, ինչպես նաև Արցախի ազատամարտում զոհված և վիրավոր համայնքի բնակիչների ընտանիքներին սոցիալական աջակցություն տրամադրելու անհրաժեշտությունից.

Առաջնորդվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետով և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ կետով, ***ավագանին որոշում է՝***

1. Բյուջետային ծախսերում կատարել 4700000 դրամի չափով նվազեցումներ, որից՝

ա/ Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 11 բաժնի 1 խմբի 2 դասի տնտեսագիտական դասակարգման 4891 «- Պահուստային միջոցներ» հոդվածի տարեկան գումարը նվազեցնել 4700000 դրամով՝ սահմանելով 33694868 դրամ:

2. Բյուջետային ծախսերում կատարել 4700000 դրամի չափով ավելացումներ, որից՝

ա/ Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 01 աժնի 6 խմբի 1 դասի տնտեսագիտական դասակարգման 4657 «- Այլ կապիտալ դրամաշնորհներ» հոդվածի տարեկան գումարը ավելացնել 700000 դրամով՝ սահմանելով 700000 դրամ:

բ/ Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 10 բաժնի 7 խմբի 1 դասի տնտեսագիտական դասակարգման 4729 «- Այլ նպաստներ բյուջեից» հոդվածի տարեկան գումարը ավելացնել 4000000 դրամով՝ սահմանելով 9600000 դրամ:

Կողմ- 5 դեմ- 0 ձեռնպահ- 0

1. Սասուն Վարդանյան
2. Սմբատ Ասլանյան
3. Արգիշտի Բաբայան
4. Գարիկ Գրիգորյան
5. Գևորգ Գևորգյան
6. Վիրաբ Սաղաթելյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԻՄՈՆ ԲԱԲԱՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԶԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ, Վայոց Ձորի մարզ, բն.Զառիթափ, (0282) 91507, zaritapi.gyughapetaran@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 48

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2020ԹՎԱԿԱՆԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ՌԱԶՄԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՄԱՐՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԶՈՀՎԱԾ ԵՎ ՎԻՐԱՎՈՐՎԱԾ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՄԻԱՆՎԱԳ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ԳՈՒՄԱՐԻ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներով, և հիմք ընդունելով Զառիթափ համայնքի ավագանու 31.01.2019 թ»-ի թիվ 13-Ն որոշման կարգի 2-րդ կետի 4-րդ ենթակետը, ***ավագանին որոշում է՝***

Տալ համաձայնություն

Հայաստանի Հանրապետությունում 2020 թվականի սեպտեմբերի 27-ին հայտարարված ռազմական դրության ժամանակ մարտական գործողությունների հետևանքով.

1. Զոհված զինծառայողների և բնակիչների ընտանիքներին տրամադրել միանվագ դրամական աջակցություն՝ 300000 /երեք հարյուր հազար/ դրամի չափով՝ հիմք ընդունելով հավաստի աղբյուրներից ստացված տեղեկատվությունը վերոնշյալ անձանց վերաբերյալ:
2. Վիրավորված զինծառայողների և բնակիչների ընտանիքներին տրամադրել միանվագ դրամական աջակցություն՝ 100000 /մեկ հարյուր հազար/ դրամի չափով՝ հիմք ընդունելով հավաստի աղբյուրներից ստացված տեղեկատվությունը վերոնշյալ անձանց վերաբերյալ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ- 5 դեմ- 0 ձեռնպահ- 0

1. Սասուն Վարդանյան

2. Սմբատ Ասլանյան
3. Արգիշտի Բաբայան
4. Գարիկ Գրիգորյան
5. Գևորգ Գևորգյան
6. Վիրաբ Սաղաթելյան

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԻՄՈՆ ԲԱԲԱՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՁԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ, Վայոց Ձորի մարզ, բն.Ձառիթափ, (0282) 91507, zaritapi.gyughapetaran@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 49-Ն

ՁԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ 2020Թ. ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՏԱՅԻՆ ԵՎ ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից համայնքի բյուջեին կապիտալ սուբվենցիայի տրամադրման հետևանքով եկամուտների ավելացման հանգամանքը և ելնելով համայնքի կարիքների համար կապիտալ ծախսերի իրականացման անհրաժեշտությունից

Առաջնորդվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետով և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ կետով, ***ավագանին որոշում է՝***

1. Բյուջետային եկամուտներում կատարել 111037598 դրամի չափով ավելացումներ, որից՝

ա/ Բյուջետային եկամուտների տնտեսագիտական դասակարգման 7332 «-Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ» հոդվածի տարեկան գումարը ավելացնել 111037598 դրամով՝ սահմանելով 111037598 դրամ:

2. Բյուջետային ծախսերում կատարել 111037598 դրամի չափով ավելացումներ, որից՝

ա/ Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 06 բաժնի 3 խմբի 1 դասի տնտեսագիտական դասակարգման 5113 «- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» հոդվածի տարեկան գումարը ավելացնել 111037598 դրամով՝ սահմանելով 168923507 դրամ:

Կողմ- 5 դեմ- 0 ձեռնպահ- 0

1. Սասուն Վարդանյան
2. Սմբատ Ասլանյան

3. Արգիշտի Բաբայան
4. Գարիկ Գրիգորյան
5. Գևորգ Գևորգյան
6. Վիրաբ Սաղաթելյան

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԻՄՈՆ ԲԱԲԱՅԱՆ**